

ՌԻՍՈՒՄ ՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ, ՇԱՐԱԿԱՆ ԱՑ

ՄԱՏՆԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆԻՔ
ՇԱՐԱԿԱՆ ԱՑ ՍԱԶԱՐԱԴՐՈՒԹՅԱՆ

Շարականների սկիզբը դրուում է հինգերորդ դարից, մեր բարոյական և մտաւար լուսաւորչներին — Ս. Սահակի և Ս. Մեսրոպի և թարգմանիչների ձեռքով, որի մասին մենք ցուցումն ունենք մեր մատենագիրների մէջ: Այս մասին իւր տեսակում աւելի ընդարձակ տեղեկութիւն մենք գտնում ենք վարդան Բարձրբերդու, հիբրակոս Գանձակեցու և Ուռպելուանի թով:

Կիրակոս Գանձակեցին թուելով մի շարք աշուներ հինգերորդ դարու թարգմանիչներից՝ Ս. Սահակ, Ս. Մեսրոպ, Յովսէփ, Յովնան, Ղեւոնդ, Սահակ, Մովսէս քերթողանայր, Մամբրէ, Նշէիկ, Կորիւն, Նղիշէ, Դաւիթ անյաղթ փիլիսոփայ, Յովնանէս, Աբրահամ, Արման, Մուշեղ, Խոսրով, Ղազար, Ստեփաննոս, աւելացնում է. «Արարին երգո շարակոնաց քաղցր և զեղեցիկ եղանակաւ և մեծ խորհրդով մենկեան Գի. եւ Բաղաստեօնայ զալսեանն 'ի Տոմարն, Մկրտրեանն եւ եկաւորութիւնն 'ի Բեքանիա եւ յԲաւսաղիմ. մեծի օաբարուն, շարշարանաց եւ Յարութանն, Համբարձման եւ Հոգւոյ Գալսեանն, Խաչի եւ Սկիզբելոյ եւ այլ օտից ճերմաւանաց եւ սրբոց ամենեցուն, ապաւսարուքիսն եւ ամենայն նշեցեցելոց, պէսպէս եւ

զանազան և տնթիւս, որ մինչեւ ցայսօր պաշտի յեկեղեցի Հայաստանեայց» (*):

Բայց այս վերոյիշեալ աշխատքներէ շարականների ցանկի մէջ միայն հինգ հոգու անունը կայ՝ Ս. Սահակի, Ս. Մեսրոպի, Մովսէս քերթողանօր, Յովնան Մանդակունու և Ստեփաննոսի: Բացի դրանից, շարականների ցանկում նշեցեցելոց շարականները վերագրուած են Պետրոս Գետադարձին՝ մինչդեռ Կիրակոս հինգերորդ դարում կը գնէ: Այստեղից եզրակացնելի է, որ Ե. դարում ևս նշեցեցելոց համար շարականներ հիւսուած են:

Հայաստանեայց եկեղեցու մոզոյճների պատմութիւնից էլ գիտնեք, որ Ե. դարում նշեցեցելոց կարգ կար սահմանուած, ուստի, չի կարելի բոլորովին վստահիլ շարականների սկզբում դրուած աշուանական ցանկին, որը չի գիտցուի թէ մի է զեանդելո:

Ներկայումս, գործածական շարականը սկսում է Վերգեցէք որդիք Սիօնի՝ Ս. Ածածին ծննդեան երգով, որ գրել է Յակովբ Կլայեցի Կաթողիկոսը և վերջնում է «Արեւելք գերարփին» վերափոխման աշխնքով: Առաջին երգը ԺԴ. դարու, իսկ վերջինը՝ ԺԵ. դարու հեղինակների

(*) Տե՛ս Գանձակեցի Կիրակոս, էջ 17, առջ 28-ից - էջ 18 և առջ 18. ապաւն 'ի Մասիվա, 1858 թ.:

նէն, ուր կիներ ճանաչուած կը նկատուէին ծննդաբերութեան յաջորդող քառասուն օրերու ընթացքին: Բացի Ս. Յարութեան Տաճարէն ներս կատարուած աւաւտեան դոնփակ հանդիսութիւնէն — Ս. Ծննդեան օրուան նման, այդ օրն ալ ուշ բանալ կու տան Տաճարին դուռը — Հատինք «Մոմօրնիւք» կը կատարեն այդ օր և մամուլիւք թափօրջմըն՝ ա՛յլ կատարեն, բացօթեայ՝ եթէ սքը թոյլատրէ: Դանի մը սարիներէ ի վեր, այսօր հանդիսութիւնը կը կատարուի փետրուարի ա-

ռաջին կիրակի օրը: — Արեւելեան եկեղեցիներ տունին յաջորդ օրը (3/16 Փետր.) կը յիշատակեն Սիմէոն ծերունին և Աննա մարգարէուհին, առին խորհուրդին հետ ա'յնքան սերտօրէն առնչուած: Սիմէոն ծերունիի դամբարանը քոյց կը տրուի քաղաքիս հարուարեմտեան կողմը, Քաւթաւօն կոչուած թաղամասին մէջ, ուր Սոյնի կառուցած են վանք և եկեղեցի, և ուր հանդիսութիւն կը կատարուի ամէն տարի 15 Փետր. ի կ. վ. և 16ի առաւօտուն:

(Նտւր. 2)

Գ. Ժ.

գրելին է պատկանում: Այս կարգն ունի՞ր
և ձեռագիր շարականներից շատերը, որք
գաղափարուած են ԺԴ. դարուց սկսեալ:

Բայց Ն. կամ Զ. դարերու մէջ ինչ-
պէս են եղած: Անո՛ւ, այս է խնդիրը:
Ենթադրելի է, որ հետզհետէ երգերը ա-
ւելացել են և երբեմն երբեմն ամփոփուած,
խմբագրուած ըստ պատկերի տօնից:

Թէ ինչ պատճառներից կարող էր յա-
ռաջ գալ խմբագրութիւն կամ խմբագրու-
թիւններ, այժմ աւելի հանգամանորէն
բացատրենք:

Պատճառները մի քանիս են. —

Նախ՝ ժամանակի ընթացքում, զար-
գանում է Եկեղեցու ծիսական մասը՝ ինչ-
պէս օտար՝ նոյնպէս և մեր Եկեղեցու մէջ:
Հետզհետէ սահմանուած են նոր տօներ,
զորս պիտի կատարէր Եկեղեցին: Եկեղե-
ցու համար նոր նահատակութիւններ են
լինում, նոր սուրբեր և սրբութիւններ
են յառաջ գալիս, և Եկեղեցին հետզհետէ
ընդունելով, 'ի պատիւ սրանց պիտի
արտայայտէր իւր երախտագիտութիւնը,
փառաբանելով սրանց և նոցա բարեխո-
սութիւնը հայցելով:

Քրիստոնէական օկղանական Եկեղեցին
շատ պարզ էր իւր կազմութիւնում և ծէ-
սով, ինչպէս առեկտու այդ ժասին ա-
ռաջօրէն: Արարողութիւններէն կատա-
րում էին միայն Ս. Հաղորդութեան Խոր-
հուրդը, Մկրտութիւն և Զեւնոդրութիւն:
Հետզհետէ յառաջ գնաց, նոր պահանջներ
յառաջ եկան և Եկեղեցին դարգացաւ, զար-
գացաւ ծէսը՝ տօներին շատասկողովը:

Նոյն զարգացումն ունեցել է և մեր
Եկեղեցին, նոր տօների առթիւ հիւսուել
են նորանոր երգեր, իսկ հին տօները ա-
ւելի են զարգացել, մի քանի օր շարու-
նակ տօնուելով: Մեր Եկեղեցին ունի
տօն, որ 7 օր շարունակ տօնում է, տօն՝
որ 3 օր կը տօնէ:

Առաջին հաստատ տօներն էին Քրի-
ստոսի յաղորդութիւնները — Ամայայտութեան,
Մկրտութեան, Քառասնօրեայ Գալտեան,
Այլակերպութեան, Եկաւարութեան 'ի Բե-
թանիս և յԵրուսաղէմ, Զարչարանաց,
Յարութեան և Համբարձման, զորս ընդ-
գծեցինք Գանձակեցոյն ցուցման մէջ: Եւ
եթէ առանձին կարգաւարութեամբ և ճշ-

գութեամբ է յիշել Գանձակեցին տօները՝
կը նշանակէ Ն. դարում սահմանուած էին
բացի Քրի. անօրինութիւններից՝ այլև
Վնայի և Եկեղեցւոյ և այլ ... Սրբոց ա-
մենեցուն ... ապաշխարութեան և ննչե-
ցելոցն:

Նոր տօներ յառաջ գալով, և միօր-
եայ տօները ըզգծօրեայ դառնալով, կա-
րիք պիտի զգացուէր նոր երգեր յօրինե-
լու, և յիշուի յօրինուած և հիւսուած են
նոր երգեր՝ նոր տօների տօնելիների
պատուին:

Բայց որպէսզի ամէն տեղ եկեղեցի-
ներում կարգը պահպանուէր, նոյն եր-
գերը երգուէին և զորք դրուէին ժամեր-
գութեան ժամանակ, պէտք էր մի ձեռ-
նարկ, մի լիակատար ժողովածու: Ահա
այդ կանոնաւոր, միատեսակ ժողովածու
կազմելն է, որին մենք խմբագրութիւն
անունն ենք տալիս:

Այսպիսի մի ժամանակ, ինչպիսին
Ե. դարից մինչև ԺԵ. դարն է, որ ապա-
գրութիւն տակաւին չլինելով, որ ձեռքով
ընդօրինակելով, գաղափարելով էր գործը
յառաջ գնում և այն ևս շատ դանդաղ-
շատ բնական է, որ յաճախ մի տեղ մօտեք
գտած երգերը, մի այլ տեղ դրուէք ան-
ձանօթ լինէին մարդկանց, որից և յառաջ
պիտի դար եկեղեցու մէջ երգեցողութեան
անհամարութիւն: Ուստի, պիտի Եկեղեցու
նախանձախնդիր Հայրերը մտածէին կար-
գաւորելու շուտ շուտ, որ ամենայն տեղ
ժամերգութիւնը նման լինէր:

Վարդան Բարեբրերդցին մեզ հաղոր-
դում է մի շատ կարեւոր տեղեկութիւն
շարականների կարգաւորման մասին, որ
եղել է է. դարում Ներսէս Շինոզի օրօք
և նորա ձեռնբերէցութեամբ:

ՎԱ (Ներսէս Շինոզը) մեծ ժողով
առնէր և տասն հարգ քառն վարդապետին
փոխեցին և ոչ կարացին առնուլ զմիմ-
եանց. ապա հրամայեաց ընտրել զարժանն
և զայն միայն ուսանիլ, զոր և արարին
'ի ձեռն Սրբոյն Բարդղի՝ ժականուն ձոյ
կոչեցելոյ, որ էր Առաջնորդ Սուրբ Ուխ-
տին, որ Գրեղմանք կոչի 'ի գաւառին
Աւսոյ, որում ասեն, թէ եօթն անգամ
ետես զՔրիստոս սքանչելի համարձակու-
թեամբ, վասն որոյ ձոնընտիր կոչի Շաս

րականն, որ այժմ պաշտի յեկեղեցի մերձ(²)։

Նոյն բանը մենք գտնում ենք և մեր եկեղեցական ժողովների կանոնների մէջ։

Կիրակոս Գանձակեցին աւելի մանրամասն է պատմում սոյն դէպքը, բայց ձոնին չէ յիշում և խմբագրութիւնն էլ ձոնին չէ վերագրում, այլ Ներսէս Շինողին և սորա ձեռքով։ Ասում է թէ՝ Ներսէսը մարգիկ է շրջեցնում բոլոր գաւառները, որ իւր ընտրածներն ու կարգաւորածները տարածեն ամէն տեղ։

Էդէպ կղեւ ամա (Ներսիսի) աշխարհա-
ժողով բազմութեամբ 'ի տօնի Վարդավա-
ռին լինել 'ի Բագրատուն և բազմաց եղին
եղի Ընտրականոց յեկեղեցի շառաց, մինչև
սչ գիտել միայն գաւառի երգեցող՝ զմիւ-
սոյն և ասացին շարական Վարդավառի
հարցին և միւս գասն ոչ կարաց փոխել
զնա, և փոխեցին բազում շարականս և
սչ զայն ևս գիտէին։ Ապա Հայրապետն
Ներսէս, հաւանութեամբ ամ. Ժողովոյն,
ընտրեցին զպիսեմին եւ զօգնակարս, զի
յամ. եկեղեցիս յամ. աւսար մի պաշտօն
լիցի ըստ աւուրն խորհրդոյ, և ընտրե-
ցին արա իմաստունս, զի Եղեղիցն ընդ
ամ. աւսարհս հայոց և զնոյն կարգաւո-
րութիւնս հաստատեցին, որ է մինչև
ցայսօր(³)։

Այսպէս, մեր անմահ մատենագիրները
ցուցմանց և շարականների երգոց ու-
սումնասիրութիւններէն կը հանենք, որ
Շարականը երեք անգամ խմբագրուել է
մինչև իր վերջին կերպարանքը առնելը։

ԱՌԱՋԻՆ ԽՄԱՍԳՐՈՒԹԻՒՆ

Ինչպէս Վարդան Բարձրբերդցին և
Կիրակոս Գանձակեցին ասում են, շարա-
կանների կարգաւորման վերայ առաջին
հոգ տանողը Ներսէս Շինողն է եղել։

Ներսէս Շինողը Վարդավառի տօնին
հանդիպում է Բագրատունում և առաւօտ-
եան ժամերգութեան ժամանակ դասում
կանգնած և զանազան տեղերից հաւաք-

ուած ուխտաւորք երգում էին։ Հարցը
երգելիս, Նրանցից ոչ մէկը միւսին նման
չերգեց։ Հայրապետը եղբակացնում է, որ
գաւառներում երգեցողութեան անհմա-
նութիւն — խառնակութիւն — կայ։ Ուս-
տի, Դուռնի ժողովում հերթական հար-
ցերը վճռելուց յետոյ, այդ բանը յանձ-
նարարում է Դպրեկանոց Վանահայր
Բարսեղի, զընտրել զարժանն և զայն
միայն սուսնիլ։ Մատենագրի ասելովը,
Բարսեղը կատարում է ժողովի իւր վերայ
գրած պարտաւորութիւնը։ Նա կարգա-
ւորում է, ընտրում է գործածական եր-
գերը, խմբագրում է երգարանում, զոր
այժմ պատշի յեկեղեցիս մեր։ Մատենագրի
ընդգծած բառերից երևում է, որ ձոնի
խմբագրածը մինչև ԺԿ. դարը ընդուն-
ուած և պահպանուած էր, որը նորա ան-
սամբ ձոնընտիր էր կոչուում։

Բայց զարմանալին այն է, որ Է. դա-
րու պատմագիր Սեբեոսը, որ քաջ ծանօթ
է Ներսէսին, և մինչև անգամ իւր գրքի
երրորդ Դպրութեան ԼԳ. — ԼԶ. գլուխները
ամբողջապէս նուիրած է Շինողի գործու-
նէութեան — առաւելապէս գաւառական
(Բագրատունականութեան) դէմ մաքառումն) —,
բայց և ոչ մի խօսք չէ ուսում Շի-
նողի այդ կարգաւորութեան մասին։

Արդեօք Սեբեոսի այդ մասին լռու-
թիւն պահպանելը պիտի բացատրենք նրա-
նով, թէ այդ գործը մի հանրածանօթ ի-
րողութիւն լինելով չէ յիշատակել։ Թէ՞
մի անշնանակ բան էր համարում։ Եւ
վերջապէս, պիտի հղբակացնենք, թէ
այդպիսի մի բան բնաւ տեղի չի ունեցել։
Վերոյիշեալ ներթադրութիւններից ինձ
աւելի հաւանական է թւում երկրորդը՝
այսինքն այդ կարգաւորութիւնը մի հան-
րածանօթ գործ էր, այլև իբրև մի գործ,
որ Հայրապետների անվորական խոկմանց
առարկայ, վասն զի նոյն կարգաւորու-
թիւնը սեփական էր արուած և միւս
Հայրապետներին։

Յովհան Օձնեցու քանմանած կանոն-
ների մէջ, մի վկայութիւն էլ գտնում
ենք Ներսէս Շինողի եկեղեցական պաշ-
տամունքի կարգաւորման մասին։ Այդ
կանոնները թուով 32 են, որք կը վերադ-
րերին եկեղեցական զանազան խնդրոց և

(²) Տե՛ս Վարդան Բարձրբերդցի, էջ 90,
10-19 տող, տպ. Մոսկուա, 1860 թ.։

(³) Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 84, տող
31-ից — 35 էջ, 5 տող։

միայն 23րդ կանոնն է վերաբերում առյուծախառնությանը: Այդ կանոնները հետևաբար վերաբերում են միայն զինվորականների համար: 23րդ կանոնի վերաբերում է՝ «վառն երկրորդ» ճանաչմանը:

Կանոն ԻԳ. — «նոյնպես և զերեկո-րինն հանգոյն միմիայն ըստ այսմ կարգի և այսու աւարինակաւ կատարել յառաջագոյն պաշտել ընտանաբնակ վերաձայնութեամբ ըստ դասուց, զոր երանելոյն ներսեւի հայոց կաթողիկոսի յաւելեալ»⁽¹⁾ է: Որպէս թէ կամեալով զսկիզբն ամենայն վերահրգակ⁽²⁾ սաղմոսիցն յաղաթիւց յառնել: զի և սաղմոսասացս⁽³⁾ աղաթք Դաւթի են ըստ վերնագրին⁽⁴⁾ յայտարարութեան. զկնի նոր այդպարեցոյ. մի ըստ միովէ վերահիւն սաղմոսան. զմիմանց զհետ ըստ դասուց վերաձայնութեամբ: Իսկ զկնի մեակդի և ուղիցնն տեսլոյ քառագիւ և աղաթս մատուցանել: Յետ այնորիկ վերահքարեանն նաւագիւ նորին նմանութեամբ և վաղճանն ամենայն պաշտամանն զհանգստեանն սաղմոս տեսլ ըստ դասուց վերաձայնութեամբ:

Յովհաննու իմաստասիրի այս կանոններն էլ զհետեւեալ են հայնաւագիւք Առաքելոց Սրբոց վերնագրով ձեռագրի մէջ, որ գրուած է Հայոց ՌՁԻ Թուին, 'ի վիճակս Առաքելի, 'ի ձեռն Սարգսի, 'ի քիւղն իտոսեան: Մայր Աթոռ Ստանապոլիէն է և ՆՁ 781 թ. կրէ: Մի ուրիշ ձեռագրի հետ համեմատած եմ (ՆՁ 449), որոց տարբերութիւնք 26րդ էջ առերես նշանակած եմ. այդ երկուսի համեմատութիւնից աւելի երկրորդը (ՆՁ 449) աւելի իսկականը կը թուայ:

Յովհան իմաստասիրի կանոններից (և թէ յորումն նրանն են) այլևս երեւում է, որ Յովհանն Մանգակաւորին էջ հարգաւորել է ժամատաղութիւնը, թէ ինչ սաղմոս պիտի տեսլ և ինչից յետոյ գլխաւորապէս կիր. աւելի զիշխարային ժամերգութիւնը:

Այս կանոններից իմանում ենք նոյնպէս, թէ Ս Սահակը ինչ ուղեքներ է գրել, կամ Յովհան Մանգակաւորին ինչ քարոզներ թողել:

Իսկ այս վերոյիշեալ եզրակացութիւններին եզրակացութիւն է, որ հարկաւ բոլոր հայրապետները առհասարակ իրենց ուշադրութիւնը դարձրած են ժամատաղութեան վերայ. նոր երգեր յորինած և գրուց չրջիկ երգիչների ձեռամբ տարածած հայոց աշխարհի ամէն կողմը միանմանութիւն և միօրինակութիւն, ինչպէս այս կը տեսնենք Ներսէս Շիրակի օրօք է. և Ներսէս Շնորհաւու օրօք ԺԲ. դարերում:

Ուրեմն, Վարդան Բարձրբերդցու այս յիշատակածը — ձոնի ընտրութիւնը — կ'ընդունենք առաջին խմբագրութեան, շարականների է. դարու առաջին կիսում:

Արդ, տեսնենք թէ ինչ շարականներ կը մտնէին այս խմբագրութեան մէջ:

Ի նկատի ունենալով, որ այս խմբագրութիւնը է. դարու առաջին կիսումն է կատարուած, ուստի նրա մէջ կը մտնէին մինչև այդ ժամանակը յառաջ եկած կենդանի արքայան հաց հիւսած հոգեոր երգերը, որք են՝ Ս. Սահակի, Ս. Մեսրոպի, Մանգակաւոր, Մ. իտոսեան, Սահակաւ Սիւնեցու և կամիտաս կթղթի:

Բովանդակութեան վերածելով, կ'ուշենանք շարականներս՝ Բրիտանսի տնօրինական տոների՝ Մանգեան, Մկրտութեան, Գրգուսեան արքայ գալուստէն՝ 'ի տաճար, Գայծառակաւութեան, 'ի Բեթանիա և յնորստաղէժ եկաւորութեանց, Մատնութեան, Քաղաքութեան, Յարութեան, Համարածան և Ս. Հոգեւոյ Դաւաւան, Ննչեցեաց (սաւկայն օչ բոլոր շարականները) և իտիւր և ապկայն այս տոների առաջին աւուր շարականները, վտանգի այդ դարերում (ց է. դարն) տոների օրերը ապակին չէին բազմացել:

Ահա այսպէս ուրեմն, ըստ իս, առաջին խմբագրութեան մէջ կը մտնէին վերոյիշեալ երգերն և այն ևս առաջին աւուր երգերը, որովհետեւ ինչպէս ակնարկեցի՝ դեռ չատ ուշ է սկսում մեր Ս. Եկեղեցին մի օրուայ տօնը կրկնել, ինչպէս Մանգեան տօնը ութօրեայ է, և այլն:

ՎԱՀԱՆ ԲԺՇԿԱՆ

(Շարունակելի՝ 3)

¹ ՆՁ 449 ձեռագրում հարգում ենք յաւելեալ է:

² Նոյն ձեռագրում հարգում ենք վերեգակ:

³ Նոյն ձեռագրում հարգում ենք Սաղմոսայն, ինչ որ աւելի հիշել է թուում ինձ:

⁴ Նոյն ձեռագրում հարգում ենք վերագրի: